

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ  
ՀՀ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ԹՈՐՈՍՅԱՆ Մ. Գ.

Հայտնի է, որ որոշակի երևույթների վերաբերյալ հանրային պատկերացումների և ընկալումների՝ ձևավորման գործում զգալի ազդեցություն ունեն տեղեկատվության ամենատարբեր միջոցները: Դա աներկբայորեն վերաբերում է նաև մշակույթ հասկացությանը: Մշակույթի հանրային ընկալումներին վերաբերող մի հետազոտության ժամանակ (2009 թ.) հարցվողները իբրև տեղեկատվության առաջնային աղբյուրներ նշել էին համացանցը, մամուլը, հեռուստատեսությունը: Իսկ ինչպես են տեղեկատվության այդ միջոցները հանրությանը մատուցում ու ներկայացնում մշակույթը, վերջինիս ո՞ր առումներն են հատկապես շեշտադրվում ու կարևորվում: Այդ նպատակով առանձնացվել են հայաստանյան համացանցային տիրույթում հրապարակվող էլեկտրոնային մի շարք թերթեր, որոնք, ըստ մեր դիտարկումների, առավել ընթերցվող են: Դրանք են՝ «Հայոց աշխարհ», «168 ժամ», Lragir.am, News.am, Tert. am, A1plus: Նշված տեղեկատվության միջոցները հետազոտվել են մեկամսյա ժամկետում:

Հետազոտության հիմքում հասարակական ընկալումներում «մրշակույթ» հասկացության բովանդակային և գործառնության առումների վերհանումն էր: Հետազոտական հարցաշարում ներառել էինք նաև հետևյալ հարցը՝ ի՞նչ էք հասկանում «մշակույթ» ասելով: Ավարտին ակնհայտ դարձավ, որ հարցվողների 80 և ավելի տոկոսը «մշակույթ» ասելով հասկանում էր հիմնականում երգ, պար, նկարչություն, քանդակագործություն և արվեստի այլ ճյուղեր: Եվ քանի որ ինչպես ցանկացած երևույթի, այնպես էլ մշակույթի ընկալման վրա մեծ ազդեցություն ունի արտաքին աշխարհից ստացված տեղեկատվությունը<sup>1</sup>, որոշեցինք այս ուսումնասիրության մեջ անդրադառնալ այդ տեղեկատվության աղբյուրներից մեկին՝ էլեկտրոնային թերթերին:

<sup>1</sup> Ընկալման հայտնի սահմանումներից մեկը տվել են Դ. Կլոպֆը և Մ. Փարկը: Նրանք ընկալումները ձևակերպում են իբրև ներքին մի գործընթաց, որի օգնությամբ ընտրվում, դասակարգվում և մեկնաբանվում է արտաքին աշխարհից ստացված տեղեկատվությունը (տե՛ս Klopff D. W., Park M. Cross Cultural Communication: An Introduction to Fundamentals. Seoul, 1982, p. 21-29):

<sup>2</sup> Ըստ Դ. Կլոպֆի և Մ. Փարկի՝ ընկալումը ներքին մի գործընթաց է, որի օգնությամբ ընտրվում, դասակարգվում և մեկնաբանվում է արտաքին աշխարհից ստացված տեղեկատվությունը (տե՛ս Klopff D. W., Park M. նշվ. աշխ., p. 24): Մեկ այլ սահմանման համաձայն՝ ընկալումը ձևակերպվում է որպես արտաքին աշխարհից ստացած

Անդրադառնալով նշված թերթերի՝ մեկամսյա ժամկետում մշակույթին վերաբերող տեղեկատվության հիման վրա կատարված հետազոտությանը՝ նշենք, որ գրանցված նյութերը փորձել ենք դասակարգել մի քանի սկզբունքներով՝ հոդվածի վերնագիրը, հոդվածի հասցեն (թերթի անունը), հոդվածի ծավալը, հրատարակման ամսաթիվը, ուղեկցող նյութերը (ֆոտո, վիդեո, աուդիո), արժարժվող թեման, հիմախնդիրը և գնահատականը, գործող անձինք և տեսակետ արտահայտող սուբյեկտները, հոդվածում հիշատակվող և տեսակետ արտահայտող կազմակերպությունները, «մշակույթ» հասկացության օգտագործման կարգավիճակը (ուղղակի, անուղղակի), քանի անգամ է «մշակույթ» բառը օգտագործված և որ հասկացությունների կամ երևույթների ուղեկցությամբ, մշակույթի ընդգրկունությունը, հոդվածի բնույթը (լրատվական, հարցազրույց, վերլուծություն, սատիրա, կենսագրական-պատմողական): Սույն հոդվածի համար առանձնացրել ենք երեք տեսանկյուն՝ արժարժվող թեման, հիմախնդիրը և գնահատականը, հոդվածի բնույթը: Նախ անդրադառնանք արժարժվող թեմաներին՝ հասկանալու համար, թե որոնք են այն թեմաները, որոնք նպաստում են մշակույթի նման սահմանափակ ընկալմանը: Դրանք բաժանել ենք չորս հիմնական խմբերի՝

- արվեստ.

- մշակույթ (որի մեջ չեն մտնում արվեստին վերաբերող նյութերը և վերը թվարկված ոլորտները): Մշակույթ և մշակութային թեմաներ ասելով այս կետում նկատի ունենք ինքնությանը, տարազին, ուտեստին, լեզվին, ավանդույթներին, սովորույթներին, ծեսերին, տոներին վերաբերող թեմաները.

- արվեստի և մշակույթի ոլորտի անձանց վերաբերող նյութեր.

- վերը նշված երեք ոլորտներից գատ մնացած թեմաները՝ քաղաքականություն, տնտեսություն, իրավունք, սպորտ, արտաքին հարաբերություններ և այլն, որոնցում առկա է մշակույթ բառը: Ճիշտ է, թվարկված ոլորտներից յուրաքանչյուրը ևս մշակույթ է կամ մշակութային երևույթ, սակայն վերջիններս նշել ենք առանձին կետով, քանի որ սույն հոդվածներում դրանք չեն դիտվում որպես մշակութային երևույթներ:

Նյութերի ամբողջական ուսումնասիրությունից պարզվում է հետևյալը՝ մեկ ամսվա կտրվածքով մշակույթին (որտեղ նշվում է մշակույթ բառը) սույն թերթերում անդրադարձել են 187 հոդվածներում, որից 98-ը վերաբերում է արվեստին, 82-ը՝ տնտեսությանը, քաղաքականությանը, միջազգային հարաբերություններին և նման այլ ոլորտներին, իսկ 7 հոդված՝ մշակութային, որից զազաններին նվիրված գիտաժողովին անդրադարձել են երկու անգամ, իսկ մշակույթի աջակցման խորհրդի ստեղծմանը՝ երեք անգամ:

---

տեղեկատվություն, որը փոխակերպվում է ներքին գործընթացի (տե՛ս **Миллер Дж. Информация и память (Восприятия. Механизмы и модели, М., 1974, с. 11):** Ընկալումը ձևավորվում է մարդուն շրջապատող մշակութային և շրջակա միջավայրի հետ նրա ակտիվ շփման շնորհիվ և կախված է մի շարք գործոններից՝ սեռը, փորձը, դաստիարակությունը, կրթությունը և այլն (տե՛ս **Grushevitskaya T. G., Popkov V. D., Sadokhin A. P. Basics of Intercultural Communication, М., 2003, p. 170):**

Առաջնային թեմաներից են հատկապես ճարտարապետությանն առնչվող խնդիրները, նաև տարբեր եկեղեցական շինությունների անմխիթար վիճակը<sup>3</sup>, Երևանում կառուցվող շինությունների օրինական և ապօրինի լինելու հարցերը<sup>4</sup>, հին շենքերի քանդումը, քննադատական մոտեցումը արձանների տեղադրմանը և Հայաստանի տարածքից դուրս գտնվող ճարտարապետական կոթողների անմխիթար վիճակը:

Հաջորդ ամենաշատ քննարկվող թեմաներից է երաժշտության ոլորտը՝ երաժշտական տարբեր փառատոներ, ձայնասկավառակների շնորհանդեսներ, շոուներ, համերգներ<sup>5</sup>: Երաժշտությանը հաջորդում է գրականությունը՝ գրքի շնորհանդեսներ, թարգմանիչների, հրատարակիչների, գրողների համաժողովներ, քննադատություններ, այնուհետև թատերարվեստը՝ տարբեր թատերական ներկայացումներ, փառատոներ, հյուրախաղեր, կինոյի բնագավառում՝ տարբեր տեղական և միջազգային կինոփառատոներ, ֆիլմերի ցուցադրություններ, այնուհետև նկարչությանը նվիրված թեմաներ և ցուցահանդեսներ: Մշակույթին վերաբերող թեմաներն ընդամենը մի քանիսն են, այդ թվում՝ «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամի մասին նյութը, որը սկսում է իրականացնել մշակույթի աջակցման նոր ծավալուն ծրագիր: Մակայն հստակ չենք կարող ասել՝ արդյո՞ք այդ ծրագիրը ևս կսահմանափակվի արվեստի ճյուղերով, թե՞ ոչ:

Հաջորդը վերաբերում է մշակութային քննադատությանը զբաղվող «Արտերիա» կայքին, որտեղ անդրադառնում են ոչ միայն կինոթատրոններին, երաժշտությանը, այլև ցուցանակներին, հաստատություններին, պատերի գրություններին, տրանսպորտային խոսակցություններին: Մշակութային տեղեկատվության հաջորդ շարքը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ծրագրերն են և

<sup>3</sup>Ճարտարապետության վերաբերյալ բազմաթիվ նյութերից նշենք մի քանիսը. XIII դարի վանական համալիրում տեղադրել են ժամանակակից «ռաբիս նաչնիկներ» (տե՛ս <http://www.tert.am/am/news/2011/10/21/hagartsin/>, 21/10/2011), Փլվել է Վարազա վանքի մուտքի մասն ու պատը (տե՛ս <http://ragir.am/armsrc/country55409.html3,29/10/2011>), Պետք է վերանորոգվի Ախթալայի վանքը (տե՛ս <http://www.lragir.am/armsrc/society54987.html3,21/10/2011>), Գոշավանքում եկեղեցիների զմբեթներին փարթավ բուսականություն, իսկ որոշ տեղերում՝ բառացիորեն ծառեր են աճում (տե՛ս <http://www.a1plus.am/am/social/2011/10/11/goshavanq, 11/10/2011>), Սրբավայրերը անտերության են մատնված (տե՛ս <http://www.lragir.am/armsrc/society55108.html3,24/10/2011>), Պետք է վերանորոգվի Օձուն գյուղի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին (տե՛ս <http://news.am/arm/news/78488.html, 19/10/2011>):

<sup>4</sup>Սրճարանը կառուցվում է պատմամշակութային հուշարձանների պահպանության զոտում (տե՛ս <http://archive.168.am/am/articles/29643,20/10/2011>), Ճարտարապետի տան տեղում կառուցվում է հյուրանոց (տե՛ս <http://www.a1plus.am/am/social/2011/10/10/rafael-isravyan,10/10/2011>), Քանդում են Երևանի հին շենքերը (տե՛ս [http://www.armworld.am/detail.php?paperid=4213&pageid=129917&lang=, 26/10/2011](http://www.armworld.am/detail.php?paperid=4213&pageid=129917&lang=)).

<sup>5</sup>Չազի մասին (տե՛ս <http://www.a1plus.am/am/culture/2011/10/24/jazz,24/10/2011>), Երաժշտական փառատոն (տե՛ս <http://www.lragir.am/armsrc/pubcorr55478.html3,31/10/2011>), Ձայնասկավառակի շնորհանդես (տե՛ս <http://www.tert.am/am/news/2011/10/12/Mary/, 12/10/2011>), Արա Գևորգյանի համերգները (տե՛ս <http://www.tert.am/am/news-2011/10/14/aragevorgyan,14/10/2011>) և այս ոլորտի այլ նյութեր:

զագաների վերաբերյալ գիտաժողովն է՝ նվիրված զագա ժողովրդի պատմությանը, մշակույթին, լեզվին, ինքնությանը: Առավել արժարժվող թեմա են արվեստի և մշակույթի ոլորտի անձանց վերաբերող նյութերը, նրանց հետ անցկացված հարցազրույցները, քննադատությունները, մահվան լուրերը<sup>6</sup> և տարելիցները: Նյութերի բնույթը մեծ մասամբ լրատվական է, որոշ մասն էլ հարցազրույցներ են. շատ քիչ են վերլուծությունները: Այսինքն՝ նյութը ներկայացնողներն ուղղակի վերարտադրում են տեղեկությունը մեկ այլ աղբյուրից՝ առանց մեկնաբանելու, վերլուծելու, բացատրելու: Հետևաբար կարելի է ասել, որ հոդվածի հեղինակները ևս մշակույթն այդ սահմաններում են ընկալում:

Անդրադառնալով թեմաներում արժարժվող հիմնախնդիրներին՝ նշենք, որ դրանք, բնականաբար, թեմատիկայով նույնն են, ինչ արժարժվող թեմաները, այսինքն՝ հիմնականում վերաբերում են արվեստի, մշակույթի գործիչներին ու արվեստի ճյուղերին՝ հատկապես պատմամշակութային ժառանգությանը:

Մտահոգիչ և բավական արժարժվող թեմաներից են Ադրբեջանի տարածքում ոչնչացվող հայկական հուշարձանների խնդիրները, Հայաստանի տարածքում հուշարձանների քանդումն ու վերականգնումը, արձանների տեղադրման վայրերի ճիշտն ու սխալը որոշելը, այնուհետև այդ շարքը լրացնում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են անորակ երաժշտության քննադատությունը, գրադարաններին և թանգարաններին տրվող հատկացումները, գրականության, թատրոնի, երաժշտության բնագավառներում տաղանդներ չլինելը, որին էլ հաջորդում են մշակույթի գործիչներին վերաբերող թեմաները: Առաջ քաշված այս հիմնախնդիրներից շատերին չի տրվում գնահատական, իսկ տալու դեպքում էլ՝ կցկտուր: Հատկապես բուռն են անդրադարձերը մշակույթի ոլորտի ներկայացուցիչների մահվան լուրերի պարագայում (օրինակ՝ Վանուշ Խանամիրյանի մահը, որին անդրադարձել են գրեթե բոլոր թերթերը, այն էլ մի քանի անգամ):

Այսպիսով, չնայած մշակույթը բարդ ու բազմակողմանի կառուցվածք ունեցող հասարակական երևույթ է և ընդգրկում է կրթության համակարգը, գիտությունը, տնտեսությունը, իրավունքը, բարոյականությունը և հանրային ու մարդկային կյանքի այլ ոլորտներ<sup>7</sup>, սույն թերթերում շատ թույլ էին մշակույթը

<sup>6</sup> Արվեստագետների մահվան լուրերին առնչվող նյութերից հղենք մի քանիսը՝ Մահացել է Վանուշ Խանամիրյանը (տե՛ս <http://archive.168.am/am/articles/29463>, 6/10/2011), Մահացել են Վանուշ Խանամիրյանն ու Գարայիս Մուրեյանը (տե՛ս <http://www.lragir.am/armsrc/country54304.html3>, 06/10/2011); Վան Գոգը ոչ թե ինքնասպան է եղել, այլ նրան սպանել են (տե՛ս <http://archive.168.am/am/articles/29599>, 18/10/2011):

<sup>7</sup> Ստորև ներկայացնում ենք մշակույթի մի քանի սահմանումներ. ազգագրագետ Է. Թայլորի սահմանման համաձայն՝ մշակույթը բաղկացած է գիտելիքներից, հավատալիքներից, արվեստից, բարոյականությունից, սովորույթներից, օրենքներից, հմտություններից և սովորություններից, որոնք յուրացվում են մարդկանց կողմից որպես հասարակության անդամներ (տե՛ս **Тайлор Э.** *Первобытная культура*, М., 1989, с. 17): Մշակութաբան Պ. Գուրնիչի սահմանման համաձայն՝ մշակույթը մի ամբողջական համալիր

*բազմակողմա-նիորեն ընկալելու և ներկայացնելու կողմերը. հիմնական շեշտը դրված էր արվեստի ոլորտների վրա, որում առաջնային տեղ են զբաղեցնում ճարտարապետությունը, երաժշտությունը, գրականությունը, այնուհետև նկարչությունը, թատրոնը, կինոն: Հիմնախընդիրները, որոնք բարձրացվում էին, թեև նույնպես արվեստի ոլորտին էին վերաբերում և անընդհատ առաջ քաշվում, բայց գնահատական կամ լուծում գրեթե չէին ստանում: Թերթերի գրեթե բոլոր հոդվածներում բացակայում են նյութերի մշակութաբանական տեսանկյունից մոտեցումն ու վերլուծությունները: Եթե փորձենք հասկանալ մշակույթի նման ներկայացման պատճառները, ապա պակաս է, որ սա բխում է այն ներկայացնողների մշակութային ընկալումներից, որոնց ձևավորման հիմքում են ընտանիքը, շրջապատը, ուսումնական հաստատությունները, տեղեկատվական աղբյուրները և այլն:*

**ВОПРОСЫ КУЛЬТУРЫ И ЕЁ ВОСПРИЯТИЯ В ЭЛЕКТРОННОЙ ПРЕССЕ РА**

**ТОРОСЯН М. Г.**

Резюме

Известно, что на формирование общественного мнения и восприятие некоторых явлений существенное влияние оказывают различные информационные средства. Сказанное относится и к понятию культуры. Чтобы понять причины общественного восприятия культуры (поскольку восприятие в значительной степени зависит от информации, поступающей из внешнего мира), необходимо изучить, как информационными средствами культура представляется общественности, какие пункты особенно акцентируются в данной информации.

**PERCEPTION OF CULTURE IN A NUMBER OF RA ELECTRONIC NEWSPAPERS**

**M. TOROSYAN**

Abstract

Obviousy, mass media have a significant impact on the formation of public perceptions and understanding. This also relates to the notion of culture. To understand the reasons for the public perception of the culture, we need to study how mass media represent culture to the public and which aspects of culture are covered and highlighted in the provided information.

---

*է, որը ներառում է մարդկային գործունեության արդյունքները, հավատալիքները, արվեստը, սովորույթները (տե՛ս Գуревич П. Культурология, М., 2003, с. 20):*